

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

23.08.2013



ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահգալոյանը աշխատանքային այցելությունների շրջանակներում հանդիպել է մարզի մի շարք համայնքների առողջապահական և կրթական հիմնարկների տնօրենների, ինչպես նաև տվյալ համայնքների ղեկավարների ու ազգաբնակչության հետ:

Մարզպետը նախ այցելել է Աբովյան համայնք, որտեղ ծանոթացել N5, N7 և N10 հիմնական դպրոցների շենքային, ինչպես նաև շահագործման պայմաններին: Նշված դպրոցներում տեղի են ունեցել նաև հանդիպում քննարկումներ ուսուցչական կոլեկտիվների հետ:

Այնուհետև մարզպետը ծանոթացել է Նոր Գյուղ-Զովաշեն կենսական նշանակության ավտոճանապարհի շինարարական աշխատանքներին, զրուցել է շինարարների հետ և տվել համապատասխան ցուցումներ:

Հատիս գյուղում Կոտայքի մարզպետը հանդիպել է ազգաբնակչությանը և քննարկել նրանց հուզող հարցեր, որից հետո տեղի է ունեցել այցելություն հարևան Զովաշեն համայնք, ինչպես նաև տեղի միջնակարգ դպրոց:

Այցելության վերջում Կ.Շահգալոյանը ծանոթացել է Կապուտան համայնքի բժշկական ամբուլատորիայի գործունեությանը, ինչպես նաև այցելել է տեղի միջնակարգ դպրոց: